

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՄՈՐՏՈՎ ԱՅԻՆ ՏՐԱՆՄՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈՆԵԳՐՈՒՄՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Կոտայքի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար.

Երթուղու					
N/N ը/կ	Անվանումը և համարը	Սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգավարական կետ)	Վերջնա կետը (ավտոկայան,ավտոկայարան երթակարգա վարական կետ)	Տեսակը (ավտոբուսային, միկրոավտոբուս ային)	Սպասարկման համար պահանջվող միկրոավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային միկրոավտոբուսների թիվը)
1	Արովյան- Նոտնուս	ք.Արովյան	գ. Նոտնուս	միկրոավտոբուսային	2
2	Հրազդան- Արզական	ք.Հրազդան	գ.Արզական	միկրոավտոբուսային	2
3	Հրազդան-Ջրատատ	ք.Հրազդան	գ. Ջրատատ	միկրոավտոբուսային	2
4	Նոր Հաճըն-Գետամեջ	ք.Նոր Հաճըն	գ. Գետամեջ	միկրոավտոբուսային	2
5	Եղվարդ-Նոր Երզնկա	ք. Եղվարդ	գ. Նոր Երզնկա	միկրոավտոբուսային	2
6	Գեղարդ-Ջրվեժ	գ.Գեղարդ	գ. Ջրվեժ	միկրոավտոբուսային	2

Մրցույթի մասնակցության պայմանները կտրամադրվեն մրցույթային փաթեթով:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. դեկտեմբերի 22ին ժամը 11.00–ին Արովյանի ավտոկայանում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր (քաջի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10.00-16.00 հետևյալ հասցեում ք.Հրազդան, Կենտրոն, մարզպետարանի շենք 2-րդ հարկ, քաղաքաշինության վարչություն: Հայտերի ընդունման վերջին ժամկետը 2016թ. դեկտեմբերի 15-ը: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարել /0223/ 2-85-27 հեռախոսահամարով:

Մրցույթն անցկացվում է ՀՀ Կառավարության 2001 թ-ի օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ց Ա Ն Կ**

**ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՎԹԵՐԻ**

- Հայտ.
- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
- Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր).
- Ավտոբուսների ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
- Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
- Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինակնությունը հաստատող փաստաթուղթ.
- Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինակնությունը հաստատող փաստաթուղթ.
- Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական գնման և բուժգնման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցույթային կարգով պահանջվելու դեպքերում.
- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակազմի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցույթային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական գնումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.
- Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղերեւի (եթե սահմանված է) փոխադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:  
Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստանձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ ստանձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ «Իսկականի հետ ճիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը: